ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

22.09.2019թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊԱՐՈՆ Տ. ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան,

ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթներով, ներկայացնում եմ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Կ292[37]-23.09.2019-ՊԻ-011/0) ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ հետևյալ առաջարկությունները և հիմնավորումները:

առդիր 3 էջ:

Հարգանքով՝

ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ **ՎԱՐԱԶԴԱՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (այսուհետ Նախագիծ)

1. Նախագծից հանել 5-րդ հոդվածը:
2. Նախագծի 6-րդ, 7-րդ, և 8-րդ հոդվածները համարակալել համապատասխանաբար՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ

Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվում է սահմանել առանձնահատկություններ համակարգող փորձագետի եւ մյուս փորձագետների (մասնագետների) պաշտոնների համար, որն է՝ համակարգող փորձագետի եւ մյուս փորձագետների պաշտոնների անձնագրերի նախագծերը կազմելիս կրթության եւ (կամ) աշխատանքային ստաժի եւ (կամ) աշխատանքի բնագավառի չափանիշները ներկայացնում է համապատասխան հանձնաժողովի նախագահը:
Համակարգող փորձագետի եւ մյուս փորձագետների կատարողականի գնահատումն իրականացվում է հանձնաժողովի նախագահի կողմից:
Վերակազմակերպված կամ անվանափոխված մշտական հանձնաժողովների համակարգող փորձագետը եւ մյուս փորձագետները (մասնագետները) օգտվում են աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքից, եթե բավարարում են նոր պաշտոնի անձնագրով սահմանված պահանջները:
Վերակազմակերպված կամ անվանափոխված մշտական հանձնաժողովում

քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելու դեպքում վերջիններս գրանցվում են քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում:

Առաջարկվող կարգավորումը չի բխում պետական ծառայության սկզբունքներից և հակասում է մի շարք օրենքների.

1 . ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին օրենքի.

-3-րդ հոդվածով սահմանվում է, որ աշխատակազմում պետական ծառայությունը քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (այսուհետ՝ Ազգային ժողով) և նրա մարմինների լիազորությունների ու գործառույթների իրականացման մասնագիտական սպասարկմանը.,

-5-րդ հոդվածով սահմանվում են՝ պետական ծառայության հիմնական սկզբունքները, որոնցից են՝ պետական ծառայության կայունությունը, պետական ծառայողների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը և այլն,

- 9-րդ հոդվածով սահմանվում է՝ Պետական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում է Ազգային ժողովի նախագահը,

-16-րդ հոդվածով սահմանվում է՝ Պետական ծառայության պաշտոնում նշանակվող անձն անփոփոխելի է, բացառությամբ սույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերի, որն է՝ պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է...:

2. Հանձնաժողովների Վերակազմակերպումը կամ անվանափոխումը հիմք չի կարող հանդիսանալ հանձնաժողովի փորձագետներին պաշտոնից ազատելու համար, և օրենքով կան կարգավորումներ պաշտոնից ազատելու հիմքերի հետ կապված:

- Քաղաքացիական ծառայության մասին օրենքով միանշանակ կարգավորվում են համապատասխան մարմնի վերակազմակերպման և կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայողի իրավական վիճակը, պաշտոնի անձնագրերի փոփոխման հետ կապված հարցերը, և հանձնաժողովների համակարգող և մյուս փորձագետների համար կրթության և աշխատանքային ստաժի և աշխատանքի բնագավառի նոր չափանիշներ առանձնացնելը, դարձնելով այդ պաշտոնները հայեցողական, չի բխում քաղաքացիական ծառայության, պետական ծառայության, Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին օրենքների որդեգրած սկզբունքներից:

- Քաղաքացիական ծառայության մասին օրենքով կարգավորվում են կատարողականի գնահատման դրույթները , մասնավորապես, 18-րդ հոդվածով սահմանվում է . Քաղաքացիական ծառայողի կատարողականն աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքի արդյունքները և այդ արդյունքներին հասնելու արդյունավետությունն է, որը գնահատում է անմիջական ղեկավարը:

- ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքի 162-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է. մշտական հանձնաժողովի գործունեության մասնագիտական սպասարկումն իրականացնում է հանձնաժողովի քարտուղարությունը, որը Աշխատակազմի ստորաբաժանում է, գործում է մշտական հանձնաժողովի աշխատակարգով և Աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ մշտական հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ:

Մշտական հանձնաժողովի փորձագետների անմիջական ղեկավարը հանձնաժողովի նախագահն է, հետևաբար կատարողականի գնահատման հարցը նույնպես օրենքով կարգավորված է.

Վերոգրյալի հիման վրա առաջարկում եմ նախագծից հանել 5-րդ հոդվածը: